«Տաք ջուրը գալիս է, երեխաներիդ վերցրու, փախիր»։

Եվ ինքդ Քրիստոսի անունը տուր։

Գիշերը չպիտի գլուխդ լվանաս, որ fաշկէրը ջրի սրսկումից գրգռված գլխիդ չխփեն։ Գիշերը երեխային չպիտի լողացնես, որ տկլոր երեխային ձեռքիցդ չփախցնեն։

Մթնելուց հետո հատակը չպետք է ավլես։ Եթե ավլեցիր, աղբը քաշիր դեպի բօնիրը՝ կրակը և ավելի ծայրը խանձիր կրակի կամ ճրագի վրա։ Քաշկէրը կարող են կպած լինել ավելին և մանավանդ նրա ծայրին։ Ավելն էլ թարս կանգնեցրու տեղը[107]։

Մթնելուց հետո ոչ ոքի մի խփիր, որովհետև fաշկն էլ կարող է միացնել իր հարվածը և հարվածի ենթարկվողը սպանվի։

Ջուրը գլխաբաց մի խմի, որովհետև fաշկը կարող է գլխիդ զարնել. նրա հարվածից պաշտպանվելու համար մեկը պետք է ձեռքը գլխիդ դնի։ Հավատում էին, որ ջրի հետ fաշկն էլ է բարձրանում դեպի բերանը։

Գիշերը ընթրելուց հետո սփռոցն ու սեղանը հավաքիր, որ fաշկն իսկույն վրան չնստի։

Հորանջելիս բերանդ խաչակնքիր՝ չլինի՞ թե fաշկը փորձի բերանդ մտնել։

Եթե մեկը փոշտում է՝ ներկա եղողները նրան առողջություն են ցանկանում, այն ենթադրությամբ, որ fաշկը փորձել է մտնել քթածակի միջով և առողջությունը վնասել։ Փոշտալով fաշկը հեռացվում էր։ Այդ պատճառով կրկնված փոշտոցը՝ ճօխտ սաբրը ավելի բարենպաստ էր համարվում։ Գիշերվա սաբրը խէր էր, որովհետև հենց գիշերն էր, որ fաշկն այթուն էր, նա էր, որ կամեցել էր քթածակով ներս թափանցել, փոշտալով նրան փախցնում էին։

Արծվանիկում, եթե որևէ մեկի ճանապարհ մեկնելու ժամանակ ներկա եղողներից. սա կամ նա փոշտաց՝ մեկնումը հետաձգվում էր մյուս օրվան։ Մեկնելուց հետո տան աղբը դուրս չէր թափվում, որ աղբի հետ fաշկէրն էլ ետևից չգնային, դուռը չէին փակում, որ fաշկէրը չնկատեին մեկնումը և չուզենային նրան հետապնդել, այլ մեկնողի ետևից մի քիչ ջուր էին ածում, որ մի խոր գետ գոյանա ու fաշկէրը, եթե ուզենային հետապնդել՝ մեջը խեղդվեին[108]։

Ննջեցյալի բերանը փակում էին և քթածակերի մեջ խունկ էին դնում, որպեսզի fաշկը հոգու հեռանալուց հետո չթափանցի դատարկված մարմնի մեջ։

Գիշերը վար չէին անում և առհասարակ հողը չէին պարաանում՝ փորում, անկասկած վախենալով, որ շրջված, բացված ակոսի մեջ կարող էր fաշկ մտնել և ապագա ցանքսին վնասել։

Եթե երեխան երկար լաց էր լինում՝ ենթադրվում էր, որ fաշկն էր նրան անհանգստացնում։ Ինչպես վերը նշված էր, մայրն իսկույն երեխայի շորերից մեկը ձգում էր հատակին, ասելով՝

«Էս էլ քու փայըտ»։

Ով գիշերը ծամոն էր ծամում, նա այդպիսով ննջեցյալի ականջն էր ծամում և դրանով fաշկէրի ախորժակն էր գրգռում։

Ինչպես ասված էր, մթնելուց հետո կշեռքը, մաղը[109], աղը, կրակը փոխ

---

[107] Հմմտ. СМОМПК, вып. XXXIV, отд. III, էջ 91, 93։

[108] СМОМПК, вып. XXXIV, отд. III, էջ 93, 96։

[109] СМОМПК, вып. XXXIV, отд. III, էջ 98։